ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Արմինե Լյովայի Գրիգորյանը, Զորավան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 07-031-0206-0063 կադաստրային ծածկագրի 33,00488 հա գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,4824 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա գործող գյուղատնտեսական մթերքների վերամշակման տնտեսությունը վերակառուցելու և արդիականացնելու խնդրանքով: Պահպանելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և ներառել այն ամենամյա հողային հաշվեկշռում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Արմինե Լյովայի Գրիգորյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան